

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 1

ՀՀ Լոռու մարզպետարանի ներքին աուդիտի կոմիտեի նիստի

20.03.2020թ.

ք.Վանաձոր

Մասնակցում էին՝

- Ա.Ղուկասյանը - Կոմիտեի նախագահ, ՀՀ Լոռու մարզպետ
- Լ.Բերոյանը - Կոմիտեի քարտուղար
- Ա.Սահակյանը - Կոմիտեի անդամ, մարզպետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ
- Ռ. Հարությունյանը - մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար
- Կ. Պետրոսյանը - «ՀՀ Լոռու մարզի Աքորու միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի գործադիր տնօրեն

Օրակարգում՝

1. «ՀՀ Լոռու մարզի Աքորու միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ում իրականացված ներքին աուդիտի աշխատանքների արդյունքների՝ աուդիտորական հաշվետվության և եզրակացության քննարկում:

Կոմիտեի նախագահի առաջարկությամբ քվեարկության դրվեց արձանագրված խախտումների և թերությունների վերացման և դրանց հետ կապված տնօրենին պատասխանատվության ենթարկելու հարցը:

Բաց քվեարկությամբ 2 կողմ, 0 դեմ և 0 ձեռնպահ ձայներով՝

Որոշվեց.

1. Աշխատանքում ունեցած լուրջ թերությունների, խախտումների համար առաջարկել ՀՀ Լոռու մարզպետին «ՀՀ Լոռու մարզի Աքորու միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի գործադիր տնօրեն Կ.Պետրոսյանի նկատմամբ կիրառել «խիստ նկատողություն» կարգապահական տույժը:

2. «ՀՀ Լոռու մարզի Աքորու միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի գործադիր տնօրեն Կ.Պետրոսյանին հանձնարարել՝ 10-օրյա ժամկետում վերացնել արձանագրված թերությունները և խախտումները, արդյունքների մասին գրավոր տեղյակ պահել ՀՀ Լոռու մարզպետարան:

ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀ

Ա.ՂՈՒԿԱՍՅԱՆ

Արձ. Լ.Բերոյանը
Հեռ. / 0322/43-44-7

